

ելած ժամանակ մէկ ուղղութիւն մը կ'առնուն լուսոյ խուրձ մի կազմելով: Եւ որովհետեւ սպիտակ լոյսը կազմող ճառագայթներն անհատաբար կերպով կը բեկանին, այս պատճառաւ նոյն աստիճան լուսաորութիւն չի ըլլար հայելոյն գունոց վրայ նոյն անկեան մէջ: Դարձեալ ուրիշ գունաւորեալ աղեղ մը կ'ունենանք դիտողին գլխոյն ետուերին համակեդրոն, որոյ դուրսը կարմիր է ու ներսը ճերմակ բիծերով խառն կապոյտ գոյն մը, և այս ահա առաջին կարգի տեմենափայլուն ծիածանն է:

Շատ անգամ ուրիշ ծիածան մ'ալ կը տեսնուի աւելի տեղոյն ու առաջնոյն համակեդրոն, բայց անկէ մեծ, որ կը ներկայացընէ գունոց հակադիր շարք մը, ներսը կարմիր իսկ դուրսը կապոյտ: Այս երկոյթըս բացատրելու սկզբունքը նոյն է, սակայն այնու միայն կը տարբերի՝ որ սորա ճառագայթներն կրկին անգամ ցլուցած են անձրեղոյ իւրաքանչիւր կաթիլներուն մէջ:

Ամենապարզ միջոցաւ կարելի է պատկերացունել այս երկու ծիածաններն ալ արուեստական կերպով, ինչպէս Ձեւ կը ցուցընէ: Անուշ 6 կամ 7 հարիւրորդամէզը տրամագծով չիշ մը ջրով լեցուն, ու արեգական լուսոյ հորիզոնական շող մը անցունել փեղկի մը վրայ բացուած լայն ծակէն. այն ատեն լուսաւոր ճառագայթներն կը ցոլանան՝ ըստ որում վերը նշանակուած է, և անկէ կը ձևանան երկու աղեղներ, և կը տեսնուին ճերմակ լուսարգելի մը վրայ՝ որ 2 կամ 3 մէզր հեռի դուրսած է չիշէն: Գոյները՝ ի հարկէ աւելի նուազ կենդանութիւն կ'ունենան քան բնական ծիածանին մէջ տեսնուած. ներք. բայց գունոց շարքը և իրենց ունեցած լուսոյ համեմատական փայլը՝ անփոփոխ է:

ՁԱՅՆԱԳԻՐՆ ԻՒՐԵՒ ՎԿԱՅ

Արդէն իսկ մեր ընթերցողաց Ձայնագրի մանրամասն նկարագիրը տուած ենք, իսկ այսօր անոր զարմանալի կիրառութեանց մին պիտի պատմենք:

Բաւական ժամանակ սուաջ հռչակաւոր Էտիսընի աշակերտին ճոնսինի կինը զարհուրելի կերպով սպաննուած գտնուեցաւ իւր տանը մէջ ի Զիկակօ: Ուր դանակով մը նորա գլուխը գրեթէ բոլորովին կտրուած բաժնուած էր յիրանացն: Ամենին նշան մի չկար, որ կարենար անզգամ մարդասպանին հետքը յայտնել և ցուցընել: Մեռեալը քրն. նողն յետ անպտուղ քննութեան մը մուհակը գրեց և մեմուայ, իսկ առած տեղեկութիւնքը այլոց չի յայտնեց՝ ըսելով. «Եթէն բան մ'է, որ շատ ծանր կերպով ապա պիտի լուսաւորուի»: Եւ եւ.

բոր կ'ուզէր մեկնել խելքը միտքը վրան յանկարծ սեղան մ'առնլը քաշեց, որուն վրայ մետաղեայ թիթեղ մի կար։ Այս թիթեղն երկու պղնձի թելերով սեղանոյն ներքե գտնուած երկու սիւնակաց հետ հաղորդակցութեան մէջ էր։ «Ի՞նչ է այս» հարցուց մեռելաքննիչն, պատասխանեց ճոնսըն թէ «Չայնագիր մ'է. գործիք մը՝ որ չըջապատեալ տեղոյ մէջ եթէ դուրի, իւրաքանչիւր ըսուած խօսքերը իրեն մէջ ամփոփելու կը ծառայէ, և ապա երբոր փափաքես կը կրկնէ նոյն խօսքերը։ Շատ օգտակար գիւտ մ'է այս։ Այս առաւօտ գիպուածով խեղճ Մինիս հետ (անուն մեռեալ ամուսնոյն) հոս դուր էի այս գործիքը, իրիկունը փորձ մ'ընելու համար։— «Լաւ, բուռն է, ըսաւ քննիչն, բանելու համար։— «Այո, յիրաւի պէտք է որ բանի»։— «Լաւ, ըսաւ քննիչն, հենցնական ձայնով մը. եթէ այս հրաշալիքն կարենայ ըսել մեզի՝ թէ կնոյդ հետ ով խօսեր է սպանութենէն առաջ, այն ատեն կոթնելու նեցուկ կէտ մի կ'ունենանք»։ ճոնսըն մեծ զարմանք կը նայէր մեռելաքննիչին, և ապա ձեռքը ճակատին զարնելով դէպ'ի վերոյիշեալ սեղանը գնաց, և գողգոթուն մատերով գործւոյն վրայ դրուած թիթեղը հաստատեց, և մէկ կոճակ մ'ալ վրան անցուց։ Յետոյ մատերը չըթանց վրայ դնելով, իբրեւ 'ի լուսթիւն հրաւիրէր ներկայ եղողքը, փսփսալով ըսաւ։ «Մտիկ ըրէք»։ Մեռելոյն քննիչը և անոր գործակատարը հըսնազանդեցան հրամանին։ ճոնսըն շնչապառու ուշ կը դնէր։ Եւ ահա յանկարծակի որոշ կերպով մեքենայէն մարդուն ձայն լսուեցաւ, որ կ'ըսէր. «Բարի լոյս, Մինի»։ Ամէն հոն ներկայ գտնուողաց յայտնի էր թէ մեքենան ճոնսընի ձայնը կը դարձնէր առ ճոնսըն։ Ապա բաւորովին տարբեր եղանակաւ մը ձայնագիրը յառաջ վարեց խօսքը. «Բարի լոյս, ճոն (Յովհաննէս)։ Վերջէն քաֆէ խմելու չեա գար»։ Ապա դարձեալ յարեց. «Ոչ, Մինի, ժամանակիս պիտի յարմարիմ, մնաս բարով, տիկին»։ Արդ ճոնսըն ըսաւ. «Թէ սակաւ մի յառաջ լսած ձայներնիս իմ և կնոյս են, և են այն բառերն՝ զորս այս առաւօտ իրարու հրաժարական տալու ատեն ըսինք»։

Մեռելոյն քննիչը խոր լուսթեան մէջ թաղուած էր, իսկ գործւոյն թերթերը ծանր ծանր յառաջ կը տանէին իրենց չըջանները զլաւնի մէջ։ Եւ յանկարծ այս կնոյ ձայնը դարձեալ լսուեցաւ. «Շատ աղէկ, կը տեսնես որ այնպիսի շնչին բան մը այս տեղէն դուրս ելնելու աշխատութիւնը չափեր»։ Ստար ձայն մը պատասխան տուաւ. «Ո՛հ տիկին, այս արգելք մի չէ. արդէն ըստ բաւականի ծանրաբեռնեալ ես առանց կոճապղպեղի սանիւն։ Արդ ո՛ր կ'ուզես որ դուրսի»։— «Ի խոհանոցի» կրկնեց կնոյ ձայնն. և վայրկեան մը բոլորովին լուսթիւն եղաւ։ և կը նստիս։— «Լաւ, շնորհակալ եմ քու աշխատութեանդ համար»։ Ասոր վրայ անմիջապէս աստտիկ և զարհուրելի ազաղակ մը հնչուեցաւ, այնպէս որ լուռք գոյնեցին նեաւե,

ցին, Դարձեալ նոր լուսթիւն մ'եղաւ, որ շուտ մը ընդհատուեցաւ շատ մը անսովոր, նշանակութիւն չունեցող ձայներով: Եւ վերջապէս լսուեցաւ 'ի ձայնագրէն այս աղաղակը. « Մի՛նի, Մի՛նի »: և էր ձայն ճոնսընի, որ այս սրտաճմիկի բառերը ըսեր էր: Ապա անմիջապէս. « Ինչո՞ւ մէկը վեր չի վերցընէր զկիւնն ». նա օգնութեան կարօտ է » — այս իմ ձայնս է, բուն իմ խօսքերս, զարմանօք ըսաւ մեռեալքնիչն, զորս ըսի հոս մտնելուս ատեն: — Այժմ ըստ բաւականի տեղեկացանք. Պարոն ճոնսըն, դու հիմա տա՛ր զմեզ այն համեմալաճառին՝ ուսկից քու կիւնդ կոծապղպեղի սանը գնիր է՞: Ամէնքը մէկէն վար իջան սանդղէն. և հինգ վայրկեան վերջը համեմալաճառի մը կրպակին առջև կանկ առին: Մի առ մի քննուեցան վաճառողն և ընկերներն: Մէկէն կրտսերագոյն լիբբն Սամուէլ, բարձրահասակ եւ րիտասարդն մի քանի բան ըսելէն ետքը, մեռելոց քննիչն անոր ուսոց վրայ դնելով ձեռքերը ըսաւ. « Դու իմ բանտարկեալս ես, ես ըզքեզ ձայնէդ կը ճանչնամ »: Դատաւորական քննութենէն առաջ եղած Սամուէլի հարցփորձն տեսարանի մը առիթի եղաւ, որ մինչև ցայժմ իրաւագիտութեան տարեգրոց մէջ մի միակ է: — Ձայնագիրը տարուեցաւ յԱտեն: Ճոնսըն համառօտ բան մը խօսեցաւ, յորում իւր զարմանալի գործւոյն կրկին արդիւնքը պարզեց և լուսաբանեց: Բազմութեամբ լի սրահին մէջ պատկառելի լուսթիւն մի տիրեց, և ընդհանուր յուզման ատեն, որ այնչափ սաստիկ էր մինչև հարկ եղաւ իշխանութեան ձեռքով չափաւորել զայն, մեքենան առաջուան սրտառուէ խօքերը կրկնեց, զորս այն դժբաղդ օրուան առաւօտ այր և կին իրարու ըսեր էին, և ապա մարդասպանին և անոր զոհին մէջ եղած խօսակցութիւնը, իսկ երբոր թշուառ կնոջ ազաղակն՝ զոր հաներ էր մարդասպանին սրոյն թափանցելը վզին մէջ իմանալով, լսուեցաւ դատաստանարանին մէջ, սարսուռ մի տիրեց դատաւորաց և երդուելոց ատենին մէջ, և ժողովրդեան վրայ սարսափ ինկաւ: Սամուէլ այս ահաբեկիչ աղաղակին վրայ՝ ամբաստանելոց նստարանէն վեր ցատկեց, և տոճոյն աչքերը առկըր սևեռեց, իբրև թէ իրեն սրովն սպաննուած զոհը, ճոնսընի կիսն առջևը ներկայ ըլլար, և երկու ձեռքերը տարածելով՝ կ'ուզէր իրմէ հեռու բռնել ճակատագիրն, « Ի՞նչ ճանչնաս աղաղակը՝ զոր քու զոհդ հանեց », ըսաւ դատաւորն. — « Չքեզ պարտաւոր կը խոստովանիս ճոնսընի Մի՛նի կնոջ սպանութեան. — « Այո՞ » կակաղեց Սամուէլ: Դատաւորն դեռ փորձ ըրաւ բերնէն բան առնելու, այլ 'ի զուր, վասն զի յամառութեամբ ամենեկին պատասխան չտուաւ և նորէն բանտ տարուեցաւ անզգայ թմբութեան վիճակին մէջ: Եւ երբոր նոյն իրիկուն բանտապանն տարաւ անոր կերակուրը, զինքը կախուած գտաւ անկողնոյն սիւնակներէն միոյն վրայ, և այսպէս չարագործը ծառայութիւն մը մատոյց դահճին: